ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Գ. Շիրակամուտ

N°—Ե -03/11

«15» 01. 2019թ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Ձեզ ենք ներկայացնում Շիրակամուտ համայնքի ղեկավարի թիվ 1-Ա և թիվ 2-Ա որոշումները:

Առդիր 2 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, գ. Շիրակամուտ
հեռ.՝ 025561501

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հունվարի 2019 թվականի N2 - Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆՈՐԱՆՈՒՇ ԻԳԻԹԽԱՆՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ և ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ և ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

. Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին՛՛ ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ,,Տեղական տուրքերի և վճարների մասին՛՛ ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով,համաձայն ՀՀ կառավարության 2007թվականի հուլիսի 19- թիվ 843-Ն և Շիրակամուտ համայնքի ավագանու 2018թվականի նոյեմբերի 29-ի թիվ 39-Ն որոշումների և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Նորանուշ Իգիթխանյանի 2019թվականի հունվարի 8-ի հայտը՝ որոշում եմ

1.Անհատ ձեռնարկատեր Նորանուշ Իգիթխանյանին /ՀՎՀՀ 66954518 / տալ ,, գ.Շիրակամուտ փողոց Հայկական , թիվ 3/1՛՛ հասցեում գտնվող 12,8 քմ մակերեսով խանութում /հիմնական շինություն/, ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ 2019 թվականի համար:

2. Աշխատակազմի քարտուղարին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, հասցե գ.Շիրակամուտ

Հեռախոս 0255-6-15-01

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

,, 11 '' հունվարի 2019 թվականի N1-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով և <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով Զինա Ավագի Երանոսյանի սեփականության իրավունքով իրեն պատկանող հողամասերից / վկայական N 1106768, N 1106767 և N1106770, տրված 2004 թվականի հունիսի 30-ին/ հրաժարվելու մասին դիմումը՝

Որոշում եմ

1.Զինա Ավագի Երանոսյանին սեփականության իրավունքով պատկանող 06-087-113-053 կադաստրային ծածկագրում գտնվող 0.34 հա մակերեսով, 06-087-178-018 կադաստրային ծածկագրում գտնվող 0,136հա մակերեսով և 06-087-103-113 կադաստրային ծածկագրում գտնվող 0,187հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողերը ճանաչել համայնքային սեփականություն:

2.Գլխավոր մասնագետին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով՝ 15 օրյա ժամկետում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանում:

3.Գլխավոր մասնագետին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականը ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան